ՄՖՂ.

Ցառաջագոյն քան զիս գրեցին ձեզ այլք վասն մահուան յակոբայ վարդապետի պատրիարքի քաղաքիս, և թէ զիա՞րդ փառաւորապէս թաղեցին զնա ի գերեզմանս պէյօղլիի առ գերեզմանի Ջուղայեցի յակոբ կաթուղիկոսին. և անդ ի մէջ բազմութեան ամենայն ազգաց ասաց գՆերբողեան սառաֆօղլու սարգիս վարդապետն իբրև զժամ մի ի զարմացումն ամենեցուն...։... եւ սախն խալփախից դադարեաց ամենևին։ (Հ. Իգնատիոս առ Մեղգոնեանն, 1764 օգոստ.ի 19. ի Կ. Պոլիս)։

ՄՖՃ.

Մահտարաժամն առաջիկայ տարւոյս չար է և մինչև ցայժմ սաստկացեալ է յոյժ. մեռեալքն անթիւ են և անհամար, ի միօջէ տանէ որ ծանօթ էր, և ես գնացի անդ անգամ մի, ելին մեռա֊ սան ոգիք... բազումք մեռան, և բազումք աստ անդ ի գիւղօրէս փախեան, և բազումք ի դրսեցւոց դարձան գնացին յերկիր իւրեանց։ Թաթարխանն յաւուրս յայսոսիկ եկն ի Կոստանդնուպօլիս, և բազումք ի մարդկանց նորա կոտորեցան, մինչև անկաւ ահ և ի սիրտ խանին և հանդերձի դառնալ յետս վաղվաղակի։ Բայց հիւանդութիւն տարւոյս ունի զերկու մասնաւոր յատկութիւնս, առաջին՝ զի բազումք յախտացելոցն ողջանան, և երկրորդ զի բազումք ի չափ հասելոց և ի ծերոց մեռանին քան թէ ի նորահասից և ի մանկանց։ (Հ. Անանիա վրդ. առ Մեղգոնեանն, 1765 Յուլիսի 17. [Կ. Պոլիս])։

ՄԿ.

Ասեն թէ և զվէզիրն փոխելոց է վասն բազմաց անհաճոյ գոլոյն, և բազում գաղտնի խռո֊ վութիւնք և ամբոխմունք են ի քաղաքիս, մինչև թուղթս սպառնալեաց գրել և արկանել ի փողոցս և ի մզկիթս թէ այրեմք զբովանդակ քաղաքս. և թագաւորն[1] ես ծպտեալ հանապազ շրջի այսր անդր զբազում դրամս ծախելով ի պարգև ամենայն խօլից, զի յինքն յանկուսցէ զսիրտ նոցա, և զի զգուշութեամբ պահպանեսցեն զքաղաքն ի հրաձգողաց և յապստամբաց։ Փանտամահն որպէս լսեմք օրըստօրէ պակասի։ (Հ. Մեսրոպ վրդ. առ Մեղգոնեանն, 1765 օգոստ. 17. [Կ. Պոլիս])։

ՄԿԱ.

Ցաւուրս յայսոսիկ երեք և երեք գիշեր տօնանմայ եղև վասն նորածին դստեր թագաւորին, և յամենայն գիշերս տօնանմային անպակաս էր եանղընն աստ և անդ, այլ ոչ տևեաց. սակայն յերկրորդում գիշերի տօնանմային եղև եանղընն ի խալաթիայ ի խուլէխափուն, և յայնմ գիշերի տագնապ մեծ եղև յամենայն բնակչաց խալաթիայ զի հուրն միանգամայն զօրացաւ յանկարծակի, և ծառացեալ բոցոյն փայլեցոյց առ հասարակ զամենայն երեսս բնակութեանց տեղւոյն. և մէխա֊ նայքն բազումք և մեծամեծք, և բնակարանքն խիտ և բազմայարկ, և մեխանաճիքն ոչ գտան ի պատրաստի, զի փակեալ զդուրս մէխանայիցն էին ի խնջոյս տօնանմային։ (Հ. Անանիա առ Մեղ֊ գոնեանն, 1766 Յունվ.ի 20. [Կ. Պոլիս])։

---

1. Մուստաֆա Գ.։